ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ______________

« 5 » սեպտեմբեր 2023

թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Սյունիքի մարզ

Ձագիկավանի մդ VII դաս

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Առաքելյան Թամար Ֆրունզիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023-2024» ուսումնական տարի

# ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- *Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)*

  6-րդ դասարանում սովորում են 9 աշակերտ՝ 5 տղա և 4 աղջիկ: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն տարբեր ընդունակություններ ու կարողություններ: Աշխույժ են, ընկերասեր, ընդունակ , հետաքրքրասեր,դրսևորում են իրենց տարիքին բնորոշ վարքագիծ: Դասարանում տիրում է առողջ մրցակցային հարաբերություններ, կամեցող են, իրար օգնող: Ուսման բնագավառում դրսևորում են պատասխանատու, կարգապահ վարք:

- ***Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում***

- *Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները,նրանց հետաքրքրությունները՝տարբեր զրույցների քննարկումների միջոցով ստեղծել անկեղծ և անմիջական մթնոլորտ: Կազմակերպված միջոցառումների շրջանակներում սովորողների մոտ լավագույն մարդկային,ազգային որակների ձևավորում,պահպանում,շրջապատում գեղեցիկը,բարին,օրինակելին տեսնելու ու գնահատելու հմտությունների ձեռքբերում:Իրենց շրջապատող աշխարհը առավել լավը դարձնելու ձգտումների զարգացում:*

- *Հայեցի դաստիարակություն*

  - ***3. 1 Հոգևոր դաստիարակություն***

*Մեր կրոնի,եկեղեցու կարևորության առանձնահատկությունների անգնահատելի դերի ընդգծում:Մեր հոգևոր ժառանգության,եկեղեցիների,կոթողների հետ ծանոթացում,այցեր հոգևոր կենտրոններ,վանքեր:*

***3. 2 Գեղագիտական դաստիարակություն***

*Ծանոթացում մշակույթի տարբեր ճյուղերին:Լավագույն նմուշների դիտման միջոցով կայուն հետաքրքրության արթնացում, դեպի արվեստ ու մշակույթ,գեղագիտական ճաշակի ձևավորում:*

*3. 3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն*

Զրույցների,կինոդիտուների,հայրենասիրական երգերի ունկդրման,պատմության հերոսական էջերի վերհանման,պատմական վայրեր էքսկուրսիաների միջոցով արմատավորել ու խորացնել հայրենասիրության,հայրենիքում ապրելու,այն հզորացնելու ներքին մղումները:

*3. 4 Ֆիզիկական դաստիարակություն*

Առողջ ապրելակերպի,առողջ մարմնում առողջ հոգի ունենալու,ակտիվ կենսակերպ վարելու կարողությունների ու հմտությունների ձևավորում ու զարգացում: :

*3.5 Աշխատանքային դաստիարակություն*

*Սովորողների մոտ զարգացնել աշխատանքի մեջ ինքնաբավ լինելու,ուրախություն գտնելու կարողություններ,աշխատանքի միջոցով լավագույն արդյունքների հասնելու հմտություններ:*

*3. 6 Բնապահպանական դաստիարակություն*

Մարդկանց,բնության մի մասնիկը լինելու գիտակցության արթնացում,բնությունն ու շրջակա միջավայրը մաքուր արտանետումներից ու աղտոտումից զերծ պահելու կարողությունների ձևավոնում:

4. Դպրոց-Ընտանիք կապը

Դպրոցը որպես սեփական տան ու ընտանիքի կարևոր մաս ընկալելու,դպրոցին,ինչպես նաև ընտանիքին ջերմորեն ու սրտացավորեն վերաբերվելու գիտակցման ամրապնդում:Ամուր պահել դպրոց-ընտանիք կապը: Հաճախակի կազմակերպել հանդիպումներ, իրազեկել ծնողներին նրանց երեխաների առաջադիմության, վարքի, հաճախումների, առողջության մասին: Առողջ համագործակցային մթնոլորտ պահպանել:

# ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| *ՈՒսումնական շաբաթ* | *Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն* | *Կատարողներ* |
|---|---|---|
| 1 | Գիտելիքի օր<br>Կազմակերպական հարցեր: | Դասղեկ |
| 2 | Աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականություն: | Դասղեկ |
| 3 | <<Ես այդպես չեմ կարծում >>թեմայով զրույց: | Դասղեկ |
| 4 | <<Ես կարող եմ>> քննարկում:Նպատակն է վեր հանել կարողություններն ու հմտությունները: | Դասղեկ և աշակերտներ |
| 5 | Խաղի միջոցով հստակեցնել աշակերտների կարողությունները | Դասղեկ |
| 6 | Մենք տարբեր ենք,բայց հավասար | Դասղեկ |
| 7 | Այց Կապանի արվեստի թանգարան | Դասղեկ և աշակերտներ |
| 8 | Իմ իրավունքներն ու պարտականությունները | Դասղեկ |
| 9 | Երազում եմ դառնալ….: | Դասղեկ |
| 10 | Գնահատիր ինքդ քեզ | Դասղեկ |
| 11 | Բնական աղետների առաջացման պատճառները | Դասղեկ |
| 12 | Կարող եմ օգտակար լինել | Դասղեկ |
| 13 | <<Ազգ և պետություն>> բաց քննարկում | Դասղեկ |
| 14 | Ազգային տոների առանձնահատկությունները | Աշակերտներ |
| 15 | Առաջին կիսամյակի ամփոփում: | Դասղեկ |
| 16 | Իմ նպատակներն ու երազանքները | Դասղեկ |
| 17 | Պաշտպանել մեզ ու մեր շրջապատը | Դասղեկ |
| 18 | Հայոց բանակ:Ես էլ եմ զինվոր | Դասղեկ |
| 19 | Դնել նպատակներ և հասնել դրանց | Դասղեկ |
| 20 | Այց գրադարան;Գիրքը իմ կյանքում | Դասղեկ |
| 21 | Քաղաքավարության կանոններ | Դասղեկ |
| 22 | Ընկերներ և ընկերասիրություն | Դասղեկ |
| 23 | Ի՞նչ է բուլինգը: | Դասղեկ |
| 24 | Մայր իմ անուշ ու անգին; | Դասղեկ |

| | | |
|---|---|---|
| 25 | <<Մասնագիտությունների մոլորակ>> ծանոթացնել մասնագիտություններին,տարբերել միմյանցից | Դասղեկ և աշակերտներ |
| 26 | <<Բարեկամներ և թշնամիներ>> քննարկում,ներկայացնել հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները | Դասղեկ |
| 27 | <<Լավ է,երբ. . . Վատ է ,երբ. . . >>թեմայով բանավեճի կազմակերպում: | Դասղեկ |
| 28 | <<Հայոց Մեծ եղեռն>> հիշատակի օր, ցեղասպանություն… | Դասղեկ |
| 29 | Ինչպես վարվել աղբի հետ...զրույց,օգնել սովորողներին գիտակցել աղբի,պոլիէթիլենի և թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա: | Դասղեկ և աշակերտներ |
| 30 | : | Աշակերտներ |
| 31 | <<Մայիսյան հերոսամարտեր>> տեսաֆիլմի դիտում: | Դասղեկ |
| 32 | <<Իմ նպատակներն ու ձգտումները>>զրույց,մտքերի փոխանակում: | Դասղեկ և աշակերտներ |
| 33 | <<Ուստարվա աշխատանքների ամփոփում>>Աշակերտների հետ ամփոփել առաջադիմությունն ու ձեռքբերումները : | Դասղեկ |

# ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| *Քննարկվող հարցեր* | *Ժողովի համառոտ բովանդակությունը* | *Ծանոթություն* |
|---|---|---|
| Նոր ուստարվա անել իքներ | Օրակարգի հարցեր և ծնողկոմիտեի ընտրություն | |
| Ուսում, «Արմաթ» խմբակ | Ուսուցման բարելավում, խմբակների մասնակցության խրախուսում: | |
| Աշակերտների կարգապահություն և առաջադիմություն | Կարգապահ ու պատասխանատու վարքի ձևավորում: | |
| Առաջին կիսամյակի ամփոփում | Կիսամյակային ամփոփիչ գնահատականների ներկայացում, ընթացիկ հարցերի քննարկում: | |
| Երկրորդ կիսամյակի սկիզբը | Կատարվելիք աշխատանքների քննարկում: | |
| Գարնանային արձակուրդների ճիշտ կառավարում | Ընթացիկ հարցերի քննարկում: | |
| Էքսկուրսիա | Մի շարք կազմակերպական հարցերի պարզաբանում: | |
| | | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| *Քննարկվող հարցեր* | *Զրույցի համառոտ բովանդակությունը* | *Ծանոթություն* |
|---|---|---|
| Կարգապահություն | Կարգապահական հարցերի քննարկում: | |
| Պարտաճանաչ լինել | Պարտաճանաչ ներկայանալ դասերին: | |
| Հիվանդությունների կանխարգելում | Տաք հագուստ, հիգիենա: | |
| Դասապատրաստվածություն | Պատրաստ ներկայանալ դասերին: | |
| Առաջադիմություն | Անտարբերության զգացում: | |
| Առողջապահական հարցեր | Համաճարակային կանոններ: | |
| Առաջընթացը | Նկատելի առաջնթացի խրախուսում: | |
| | Համագործակցություն: | |
| | | |
| | | |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

| *Քննարկվող հարցեր* | *Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը* | *Ծանոթություն* |
|---|---|---|
| Ծնողկոմիտեի կազմը | Նախատեսվում է ծնողկոմիտեի կազմի փոփոխություն: | |
| Կրթություն | Ուսումնական մակարդակի բարձրացում: | |
| Կարգապահական հարցեր | Կարգապահության ապահովում: | |
| Կիսամյակի ամփոփում | Կարգապահական և ուսումնական հարցերի քննարկում: | |
| Ընթացիկ հարցեր | 2-րդ կիսամյակի հաջող սկիզբը: | |
| Ծնող-դպրոց կապը | Ծնողավարության մի քանի հարցերի քննարկում: | |
| Տարեկան ամփոփում | | |
| | | |
| | | |
| | | |

Աշակերտական խորհուրդ

1.Նազարյան Ալեքս

2.Հակոբյան Արինա

3.Արսենյան Նարեկ